

Ցանկացած բնական թիվ մեկով մեծ է իրեն նախորդող թվից, այսինքն՝ ստացվում է նրան մեկ գումարելու միջոցով.

$$1 = 0 + 1, 2 = 1 + 1, 3 = 2 + 1, 4 = 3 + 1, 5 = 4 + 1, \dots$$

Բնական թվերը կոչվում են նաև ամբողջ դրական թվեր: Այդ պատճառով նրանցից առաջ երբեմն դնում են + նշանը, օրինակ՝ +6(«պլուս 6»):

Ճիշտ է նաև հետևյալ պնդումը, ցանկացած բնական թիվ մեկով փոքր է իրեն հաջորդող թվից, այսինքն՝ ստացվում է նրան մեկ հանելու միջոցով:

Օրինակ՝  $3=4-1$ ,  $2=3-1$ ,  $1=2-1$ , ճիշտ է նաև զրոյի դեպքում  $0=1-1$ : Այսինքն՝ ամենափոքր բնական թվից՝ 1-ից, եթե հանենք մեկ կատանանք 0, իսկ երբ նույն տրամաբանությամբ շարունակենք և հաջորդ քայլում 0-ից հանենք 1 կատանանք այնպիսի թիվ, որն այսուհետ կանվանենք բացասական թիվ: Այսպիսով՝

Չրոյից փոքր թվերը կոչվում են բացասական թվեր:

Չրոյից 1-ով փոքր թիվը նշանակվում է այսպես.  $-1$  (կարդացվում է

«մինուս մեկ»): Պարզ է, որ պիտի տեղի ունենա հետևյալ հավասարությունը.  $-1 = 0 - 1$ :

$-1$ -ը այսպես կոչված ամբողջ բացասական թվերից առաջինն է:

Հաջորդ ամբողջ բացասական թիվը  $-2$ -ն է («մինուս երկու»). այն 1-ով

փոքր է  $-1$ -ից: Այսինքն՝  $-2 = -1 - 1$ :

Նրան հաջորդում է  $-3$  թիվը.  $-3 = -2 - 1 = -1 - 1 - 1$ :

Այս գործողությունը՝ թվից 1-ի հանումը, իհարկե, կարելի է շարունակել՝ ստանալով նորանոր ամբողջ բացասական թվեր՝  $-10$ ,  $-11$ , ...


Քնական թվերը կոչվում են նաև ամբողջ դրական թվեր: Այդ պատճառով նրանցից առաջ երբեմն դնում են + նշանը. օրինակ՝ +5 («պլուս հինգ»):

Չրոն ո՛չ բացասական թիվ է, ո՛չ էլ դրական, ինչը ևս մեկ անգամ հաստատում է նրա յուրահատկությունը:

Ամբողջ դրական և բացասական թվերն ու զրոն ունեն ընդհանուր անվանում՝ ամբողջ թվեր:

## Բացասական և դրական թվեր

Նկարում ցուցադրված է օդի ջերմաստիճանը չափող ջերմաչափ:



**A)** Առաջին ջերմաչափը ցույց է տալիս  $0^{\circ}\text{C}$

Երկրորդ և երրորդ ջերմաչափերի ցուցումները կարելի է կարդալ տարբեր ձևերով՝ **B)** 12 աստիճան տաքություն, կամ 12 աստիճան զրոյից բարձր, կամ  $+12^{\circ}\text{C}$

**C)** 10 աստիճան ցուրտ կամ 10 աստիճան զրոյից ցածր, կամ  $-10^{\circ}\text{C}$

+ նշանով գրված ջերմությունը կոչվում է դրական, իսկ – նշանով գրվածը՝ բացասական: Դրական արժեքները սովորաբար գրում են առանց +նշանի՝  $12^{\circ}\text{C}$ -ն և  $+12^{\circ}\text{C}$ -ն՝ նույն ջերմաստիճանն է: